

ԿԱՐԾԻՔ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

**Առլեն Մայիսի Շահվերդյանի «Էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրը
ոազմավարական գնահատման համատեքստում (ՀՀ օրինակով)» թեմայով
ատենախոսության վերաբերյալ, ներկայացված ԻԳ.00.02 - «Քաղաքական
ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար**

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Էկոլոգիական անվտանգությունը ազգային անվտանգության, պետական և գլոբալ կառավարման արդյունավետության ապահովման իմաստով ներկայումս դարձել է գերակա հիմնախնդիրներից մեկը: Այն առաջ է քաշել հետազոտական նոր ուղղություններ՝ դառնալով միջգիտակարգային ուսումնասիրության ուրույն առարկա: Էկոլոգիական անվտանգությունը ձեռք է բերել բազմավեկտորություն՝ ներառելով ինչպես բնության, շրջակա միջավայրի և բնապահպանության, այնպես էլ միջազգային հարաբերությունների, արտաքին ու ներքին քաղաքականության, պետական ու ոազմական կառավարման, հանրային կեցության քաղաքական կազմակերպման, ժամանակակից պատերազմավարության, մարդու իրավունքների պահպանման և այլ գործընթացներ: Այս հիմնախնդրի՝ հատկապես քաղաքական գիտության տեսանկյունից դիտարկումն ու ոազմավարական գնահատումը հնարավորություն են տալիս կիրառելու էկոլոգիական բազմաշերտ և բազմաբովանդակ խնդիրների լուծման, դրանց հետևանքների հնարավորինս նվազեցման կամ չեզոքացման արդյունավետ գործիքակազմ՝ հիմնված քաղաքական գիտության մեթոդաբանական լայն և ընդգրկուն ապարատի վրա:

Ատենախոսության թեմայի դիտարկումը ՀՀ անվտանգային շահերի տեսանկյունից և Ղարաբաղյան հակամարտության համատեքստում ավելի է ընդգծում թեմայի արդիականությունը՝ վեր հանելով մեզ հուզող բազմաթիվ խնդիրներ և գնահատելով դրանք քաղաքագիտական, ոազմավարական և ոազմական ոազմավարական մակարդակներում:

Ատենախոսության թեման արդիական և կարևոր նշանակություն ունի ինչպես էկոլոգիական հիմնախնդրի ազգային և միջազգային չափումներում ոազմավարական գնահատման տեսանկյունից, այնպես էլ հիմնախնդրի վերաբերյալ միջազգային և տեղական իրավական, քաղաքական, դիվանագիտական, տնտեսական, սոցիալական, բնապահպանական, տեղեկատվական և այլ գործընթացների գնահատման համատեքստում:

Հատկանշական է քաղաքական էկոլոգիային կամ էկոլոգիական քաղաքագիտությանը՝ հեղինակի կողմից աշխատանքում տրված զգալի ուշադրությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է վեր հանել էկոլոգիական անվտանգության հիմնախնդրի նշանակությունն ու ընդգծել կարևորությունը քաղաքագիտական և ոազմավարական առումներով, ներպետական ու միջպետական քաղաքական-անվտանգային գործընթացներում և ժամանակակից պատերազմներում, միևնույն ժամանակ՝ դիտարկելով բնահամակարգի միտումնավոր ոչնչացման դատապարտման միջազգային գործընթացների արդյունքները՝ որպես

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում հակառակորդի նկատմամբ գերակայություն ապահովող բանակցային գործիք և ՀՀ անվտանգային շահերի ապահովման նոր ու արդյունավետ ռազմավարական ուղղություն:

Առաջադրված նպատակին հասնելու համար հեղինակն իր առջև դրել է հետևյալ խնդիրները՝

- վերլուծել «Էկոլոգիա» գիտաճյուղի, «Էկոլոգիական անվտանգության» հասկացության արդի զարգացումները,

- վերհանել մարդու կողմից բնահամակարգերի միտումնավոր վնասումը՝ Էկոցիդը, որպես Էկոլոգիական անվտանգության կարևոր սպառնալիք՝ դիտարկելով այն ժամանակակից պատերազմների բնութագրիչ գծերի և միջազգայնորեն դատապարտելի հանցագործությունների տիրույթներում,

- պարզաբանել և հետազոտական հենքով գնահատել պատերազմների կործանարար ազդեցությունը բնության վրա,

- ցույց տալ Էկոլոգիական անվտանգության քաղաքական-անվտանգային, քաղաքագիտական գնահատման խնդրի կարևորությունը ռազմավարական մակարդակում, ներպետական և միջպետական քաղաքական գործընթացների տիրույթներում, Ղարաբաղյան հակամարտության և Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների համատեքստներում:

Աշխատանքի գիտական նորույթը: Ատենախոսության մեջ Էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրը գնահատվել է քաղաքագիտական և ռազմավարական մակարդակներում, խորքային կերպով և համակողմանիորեն վերլուծվել է միջազգային քաղաքական, իրավական, բնապահպանական գործընթացներում, ժամանակակից պատերազմների և զինված հակամարտությունների բնույթի փոփոխության հաշվառմամբ, բացի այդ՝ դիտարկվել ու ներկայացվել է ՀՀ անվտանգային շահերի տեսանկյունից և Ղարաբաղյան հակամարտության համատեքստում: Էկոլոգիական անվտանգության ապահովման հիմնախնդիրը դիտարկվել է նաև՝ որպես Հայաստանի պետական արտաքին քաղաքական, ռազմական և տեղեկատվական անվտանգությունների ապահովման ուրույն և թիրախային գործիք:

Հեղինակի կողմից առաջ է քաշվել ռազմական ռազմավարական տեսանկյունից Էկոլոգիական անվտանգության հիմնախնդրի գնահատման և Էկոլոգիական բովանդակությամբ հնարավոր պատերազմի բնույթի որոշման արդյունավետ մեխանիզմ՝ օգտագործելով պատերազմների բնույթի կանխատեսման և որոշման սոցիալ-քաղաքական ու ռազմավարական բնույթի տարրերը, ինչը, ըստ էության, նոր և բավական ուշագրավ մոտեցում է: Էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրը գնահատվել է նաև պատերազմներում և զինված հակամարտություններում միտումնավոր բնառչնչացման՝ Էկոցիդի, դրսևորումներին միջազգային իրավական գնահատականների տիրույթում՝ խնդիրը դիտարկելով Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների ծիրում:

Իմաստավորվել և մեկնաբանվել են «Էկոլոգիա» և «Էկոլոգիական անվտանգություն» հասկացությունների զարգացումն ու ընդլայնումը արդի քաղաքական, անվտանգային գործընթացներում և հասարակական ու միջազգային ընկալումներում:

Հատկանշական է, որ ատենախոսության շրջանակներում հեղինակի կողմից գիտական շրջանառության մեջ են դրվում Էկոլոգիայի և Էկոլոգիական անվտանգության

զարգացմանը վերաբերող հիմնավոր կերպով առաջ քաշված ու մեկնաբանված երկու նոր տերմիններ՝ «սոցիալացանցային էկոլոգիա» և «սոցիալացանցային էկոլոգիական անվտանգություն»:

Ատենախոսության արդյունքների գործնական և գիտական նշանակությունը:

Ատենախոսությունն աչքի է ընկնում ինչպես տեսական, այնպես էլ գործնական զգալի նշանակությամբ: Աշխատանքում ստացված արդյունքների ճշտությունը և հիմնավորումը պայմանավորված է հեղինակի առջև դրված խնդիրների լուծման համար կիրառված մեթոդներով:

Տեսական առումով՝ բացահայտվում և կարևորվում են էկոլոգիական անվտանգության հիմնախնդրի քաղաքագիտական գնահատման դերն ու նշանակությունը միջազգային արդի քաղաքական գործընթացներում, արտաքին և ներքին քաղաքականության իրականացման առումով:

Գործնական տեսանկյունից՝ ատենախոսությունը կարող է զգալի օգտակարություն ունեցող նյութ լինել ՀՀ պետական կառավարման քաղաքականության մշակման և գործադրման դերակատարների համար, ինչպես նաև նոր հետազոտությունների խթան հանդիսանալ: Ատենախոսության արդյունքները և, հատկապես՝ առաջ քաշված մոտեցումները կարող են օգտագործվել նաև բուհական համակարգում՝ ՀՀ ազգային անվտանգության համակարգի և էկոլոգիական անվտանգության ոլորտի զարգացման նպատակով: Այս իմաստով հատկանշական է, որ ատենախոսությունը, որպես ուսումնական նյութ, տևական ժամանակ է ներառված է ՀՀ պաշտպանության նախարարության Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի կրթական ծրագրերում:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է նախաբանից, երկու գլուխներից, եզրակացությունից, առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ընդհանուր ծավալը 177 էջ է:

Ներածության մեջ նկարագրված են ատենախոսության թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, նպատակը և խնդիրները, հետազոտության օբյեկտը և առարկան, հետազոտության մեթոդները, գիտավարկածը, աշխատանքի տեսական և կիրառական նշանակությունը և այլն:

Առաջին գլխում նկարագրված են էկոլոգիական խնդիրների և անվտանգության ուրույն փոխկապվածությունը, «էկոլոգիա» գիտաճյուղի ընդլայնումն ու դրա նշանակության տարածումը, էկոլոգիական անվտանգության հիմնախնդրի՝ քաղաքագիտության տեսանկյունից դիտարկման ու գնահատման առանձնահատկությունները, առավելություններն ու հետազոտական նոր հնարավորությունները՝ ընդգծելով հայրենական գիտության մեջ էկոլոգիական քաղաքագիտության՝ որպես արդիական ու կարևոր գիտաճյուղի զարգացման անհրաժեշտությունը: Ներկայացվում են էկոլոգիական անվտանգության հիմնախնդրի ռազմավարական գնահատման մեխանիզմը, հիմնախնդիրը դիտարկվում է արտաքին ու ներքին քաղաքական տիրույթներում՝ պետությունների կողմից վարվող քաղաքականության և միջպետական հարաբերությունների վերաիմաստավորման համատեքստում: Առաջին գլխում հանգամանորեն նկարագրված է հակառակորդի բնահամակարգի միտումնավոր ոչնչացումը՝ բնաոչնչացումը կամ էկոցիդը:

Երկրորդ գլխում ներկայացված է հետազոտական կոնկրետ օրինակ՝ Ղարաբաղյան հակամարտությունը, որի ընթացքում էկոլոգիական մի շարք խնդիրներ զգալի ազդեցություն

և նշանակություն են ունեցել՝ հաճախ դառնալով հակառակորդի կողմից քաղաքական շահարկման առարկա: Երկրորդ գլուխը նշանակալի է հատկապես այն առումով, որ հետազոտված են էկոցիդի դատապարտման և քրեորեն պատժելի հանցագործություն ճանաչելու միջազգային իրավական գործընթացի հնարավորություններն ու ընթացքը, հետագա զարգացման միտումները, հայկական դիրքերի ամրապնդմանն ուղղված տեսանելի բարենպաստ հնարավորությունները՝ Ղարաբաղյան հակամարտության գործընթացում և, հատկապես՝ Հայաստան-Ադրբեջան հետագա հարաբերությունների ու ՀՀ շահերի ապահովման համատեքստում:

Եզրակացություններում ներկայացվել են ատենախոսության հիմնական արդյունքները, եզրահանգումներն ու դրանցից բխող ատենախոսի առաջարկությունները:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ: Ատենախոսությունը գերծ չէ որոշակի թերություններից.

1. Ատենախոսության նախաբանում, որպես գիտական նորույթ (էջ 11), մասնավորապես նշվում է, որ «Իմաստավորվել և մեկնաբանվել են «էկոլոգիա» և «էկոլոգիական անվտանգություն» հասկացությունների զարգացումն ու ընդլայնումը արդի քաղաքական, անվտանգային գործընթացներում և հասարակական ու միջազգային ընկալումներում: Դրանց սահմանումներում արվել են հեղինակային խմբագրումներ և ներկայացվել առաջարկության տեսքով»:

Կարծում ենք, որ նշված կետը լրացուցիչ պարզաբանման կարիք ունի՝ հիմնավորելու համար, թե հատկապես ինչու է առաջացել անհրաժեշտություն մասնագիտական գրականության մեջ առկա սահմանումներում իրականացնելու հեղինակային որոշակի լրամշակումներ: Բացի այդ, ատենախոսության մեջ սահմանման լրամշակման առաջարկ ներկայացված է միայն «էկոլոգիական անվտանգություն» հասկացության վերաբերյալ, թեպետ գիտական նորույթում շարադրված է դրանց, այսինքն՝ երկու հասկացությունների վերաբերյալ:

2. Ատենախոսության երկրորդ գլուխը, որն ըստ էության և նշանակության աշխատանքի առավել գործնակիրառական հատվածն է, ունի հետևյալ վերտառությունը՝ «էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրը Ղարաբաղյան հակամարտության համատեքստում և Հայաստան-Ադրբեջան հարաբերություններում»: Հեղինակն այս գլխում, ըստ էության, հետազոտության առարկա է դիտարկել՝ էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրը Ղարաբաղյան հակամարտության և Հայաստան-Ադրբեջան հարաբերություններում՝ այդպիսով հակամարտությունը գնահատելով ՀՀ շահերի ապահովման տեսանկյունից:

Կարելի է ենթադրել, որ հիմք է ընդունվել այն հանգամանքը, որ ՀՀ-ն ներքաշվելով Ադրբեջանի կողմից սանձազերծված Արցախյան առաջին պատերազմի մեջ, աստիճանաբար դարձել է հակամարտության, իսկ դրա զինադադարից հետո՝ նաև այդ հակամարտության կարգավորման բանակցային գործընթացի կողմ՝ տարիներ շարունակ հանդիսանալով Արցախի և արցախահայության անվտանգության երաշխավորը: Այսինքն՝ ըստ էության, Ղարաբաղյան հակամարտությունն ուղղակիորեն առնչվել և այժմ էլ առնչվում է ՀՀ ազգային անվտանգության ապահովման խնդրին՝ հաշվի առնելով նաև 2020 թ. հետպատերազմյան իրողություններն ու Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների առկա և հնարավոր հետագա մակարդակը:

